ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ՀԱՍՐԱԹՅԱՆ

Ծնվել է 1918թ., Սիսիանի շրջանի Աղքենդ (Աշոտավան) գյուղում: Դեռ երկու տարին չբոլորած, նրան որդեգրել է քեռին՝ ճանաչված գործիչ Ք. Հասրաթյանը, և տեղափոխել Ախլաթյան գյուղ: Կրում է քեռու ազգանունը: 1933թ. ավարտել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 66 միջնակարգ դպրոցը: Դաստիարակության և ուսման գործով զբաղվել է մյուս քեռին՝ ականավոր գիտնական Մորուս Հասրաթյանը: 1937թ. ավարտելով լեռնամետալուրգիական տեխնիկումը՝ ուսումը շարունակել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետում: Երեք տարի աշխատել է հանրապետության տարբեր շրջաններում, 1945-50թթ.՝ Երևանի Լենինյան (այժմ՝ Շենգավիթի) շրջխորհրդի գործկոմի կոմունալ բաժնի վարիչ, գործկոմի նախագահի տեղակալ, իսկ 1952-56թթ.՝ նախագահ:

1956թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ, կոմունալ տնտեսության բաժնի վարիչ:

1958թ. նշանակվել է իր իսկ կազմակերպած <<Երևաննախագիծ>> ինստիտուտի տնօրեն:

1960թ. ընտրվել է Լենինականի (այժմ Գյումրի) քաղխորհրդի գործկոմի նախագահ:

1962թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ և աշխատել մինչև 1975թ. փետրվարը: Այնուհետև եղել է ՀԽՍՀ կաթնեղենի-մսեղենի արդյունաբերության նախարարի տեղակալը, Նախարարների խորհրդին առընթեր հուշարձանների պահպանության նորաստեղծ գլխավոր վարչության պետը, Հայաստանի ազգագրության թանգարանի և Սարդարապատի համալիրի տնօրենը:

Գ. Հասրաթյանը եղել է մի շարք գումարումների ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր:

1998թ. նրան շնորհվել է <<Երևանի պատվավոր քաղաքացի>> կոչումը:

Մահացել է 2001 թվականին: